ԱՂՁՔԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Աղձքի համալիրի, մասնավորապես, դամբարանի մանրամասն քննությանը անդրադարձել եմ դեռևս 2005-ին և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ առաջադրել այն կարծիքը, որ «Աղձքի դամբարանը Արշակունիներին վերագրելու ընդունված տեսակետը հերքվում է՝ իբրև պատմագրական վկայության անհիմն մեկնաբանության արդյունք: Սրա հետ կապված, բնականաբար, հերքվում է նաև դամբարանը 364-ին կառուցված լինելու տեսակետը»[1]: Առաջադրված կարծիքի իմաստը և ձևակերպումն այնքան պարզ էր, որ այն ըմբռնելու համար մասնագիտական կրթություն ունենալը նույնիսկ պարտադիր չէր: Սակայն ճարտարապետության պատմությամբ, ինչպես նաև հայագիտության մյուս ճյուղերով զբաղվող գիտնականները համառորեն շարունակում են վկայակոչել պատմիչներին և նույնությամբ կրկնում ընդունված վարկածը:

Հարկ է նկատել, որ նման դիրքորոշման պատճառն ինչ-որ տեղ հասկանալի է՝ պատմիչների տեղեկությունների և գյուղի տարածքում դամբարանի հայտնաբերման փաստի համընկնումը, դրա հետ մեկտեղ քրիստոնեական վաղ շրջանի ստույգ թվագրված գեթ մեկ հուշարձան ունենալու պահանջն այնքան մեծ ու գայթակղիչ է եղել, որ պատմիչների տեղեկությունները մանրազնին քննության չեն առնվել: Սակայն, երբ շրջանառության մեջ է դրված հակառակ տեսակետը, ուր մատնանշվում է նաև թյուրիմացության պատճառը, ներկայիս գիտնականների պահվածքը ոչ միայն անհասկանալի է, այլև տարօրինակ: Այս պարագայում մնում է միայն ակադեմիական և գիտական կոչումներ, գիտական աստիճաններ կրող գիտնականներին հորդորել, որ մեկ անգամ ևս ծայրից ծայր, ընդ որում, ուշադրությամբ կարդան պատմիչների վկայությունները և մատնացույց անեն, թե որ պատմիչի, որ տեղեկությունը, որ պարբերությունը, որ նախադասությունը, որ բառակապակցությունը կամ որ բառն է հիմք հանդիսանում, թեկուզ հուշում, որ

---

[1] *Վ. Գրիգորյան. Աղցք գյուղի ճարտարապետական համալիրը.– ՊԲՀ, 2005, -2, էջ 279–289:*

Արշակունի թագավորների գերեվարված մասունքները վերաթաղվել են Աղձք գյուղի դամբարանում:

Ինչևէ, նկատի ունենալով Աղձքի դամբարանի բացառիկ արժեքը ոչ միայն հայ, այլև համընդհանուր մշակույթի պատմության համար, ստիպված եմ մեկ անգամ ևս հնարավորինս դյուրըմբռնելի անդրադառնալ հիշյալ խնդրին:

Ա. Աղձքի դամբարանի պատկանելությունը և անվանումը: *Արշակունի թագավորների մասունքներն առևանգելու, դրանք ետ խլելու կամ խնդրանքով ետ ստանալու ու վերաթաղելու այդ աննախադեպ պատմությանը հայ պատմիչներից անդրադարձել են միայն Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին: Ընդ որում՝ մասունքներն Աղձք գյուղում վերաթաղելուն վերաբերող նրանց հայտնած ուղղակի տեղեկություններն ընդամենը մեկական նախադասություններ են:*

Փավստոս. «Արդ՝ Վասակը խլում է նրանցից Հայաստան աշխարհի բոլոր գերիները, իսկ թագավորների ոսկորները, որ նրանցից Վասակը խլեց, տարան, թաղեցին Աղձք կոչված ամուր գյուղում՝ Այրարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան նեղ ու դժվարամուտ խորշերից մեկում»[2]:

Խորենացի. «Բայց հետո նախարարները խնդրեցին ետ ստացան (ոսկորները) և թաղեցին Աղցք ավանում, որ Արագած կոչված լեռան ստորոտում է»[3]:

Եթե այս նախադասություններից հանենք բնակավայրի տեղադրությանը, անվանմանը, ոսկորները խլողներին կամ խնդրանքով ետ ստացողներին վերաբերող տեղեկությունները, ապա կստանանք սոսկ հետևյալ վկայությունը՝ «ոսկորները թաղեցին Աղձքում»: Ակներև է, որ այս վկայությունը չի մատնանշում մասունքների թաղման կոնկրետ տեղը. այն կարող էր լինել գյուղի արևմտյան մասում, որտեղ, ըստ Շահխաթունյանցի, հնագույն գերեզմանոցն է եղել, կարող էր լինել արևելյան մասում, որտեղ Աղձքի համալիրն է, կարող էր լինել գյուղի հարավային կամ հյուսիսային մասերում կամ էլ գյուղին մերձակա որևէ տարածքում: Այդ վկայությունից ոչինչ չի հասկացվում, թե մասունքները թաղելուց հետո ինչով է պատվել թագավորների գերեզմանը՝ տապանաքար, կոթող, թե այլ տիպի մահարձան են կանգնեցրել:

Այժմ գանք պատմիչների անուղղակի տեղեկություններին:

---

[2] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 193:*

[3] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 262:*

Փավստոս. «Իսկ իրենք հոգ տարան աշխարհը խաղաղացնելու, բարեկարգելու, գերիները տեղավորելու, այրածն ու ավերածը նորոգելու»[4]:

Խորենացի. «Իսկ հայոց նախարարները հավաքվելով դիմեցին թագավորական դաստակերտ Արշակավանի վրա, սրով կոտորեցին տղամարդկանց և կանանց … »[5]:

Դժվար չէ նկատել, որ պատմիչների անուղղակի տեղեկություններում մասունքները թաղելուց անմիջապես հետո և հետագայում Աղձքում դամբարան կառուցելու կամ գոյություն ունեցող դամբարանում մասունքները թաղելու մասին ակնարկ անգամ չկա: Ավելին, Աղձքի դամբարանի մասին վիմագրական և մատենագրական տեղեկություններ ընդհանրապես գոյություն չունեն: Ստացվում է, որ գիտնականները, փաստորեն, հիմք ընդունելով լոկ վերոհիշյալ «ոսկորները թաղեցին Աղձքում» բառակապակցությունը, Աղձքի դամբարանը վերագրում են Արշակունի թագավորներին:

Բ. Աղձքի դամբարանի թվագրությունը: *Ճարտարապետության պատմության ուսումնասիրության առաջնային խնդիրը հուշարձանի կառուցման ստույգ ժամանակի կամ ժամանակագրական սահմանների ճշգրտումն է: Հայ ճարտարապետության պատմության հիմնադիր Թորոս Թորամանյանը Աղձքի դամբարանի և քանդակների մասին գրում է. «Պատմական տեղ է Աղց գյուղը և հնագիտական մնացորդներ կան ոչ միայն ամբողջ քրիստոնեական շրջանի, այլև նախաքրիստոնեական հին դարերի: Քրիստոնեական շրջանի 5-րդ դարու հուշարձաններից զատ, կա նաև քանդակազարդ ծածկույթավոր դամբարան, որը նախաքրիստոնեական լինելու ամեն հավանականություն ունի, բացի արևելյան կողմի փոքրիկ կիսաբոլորակ խորանը, որն ավելի ուշ ժամանակ քրիստոնեականի վերածելու նշաններ ունի», «…Այստեղ է (Աղձքում – Վ. Գ.) այն վերին աստիճան հետաքրքրական Արշակունյաց ստորերկրյա կամարակապ դամբարանը, որուն մեջ հատուկ շինված տապաններու ճակատին քանդակված են հայոց հնագույն շրջանի հատուկ քանդակներ»[6]: Թորամանյանի կարծիքն առանց քննության առնելու, վիճարկելու և մերժելու, պարզապես ընդունված և այսօր էլ շրջանառվող միակ տեսակետն այն է, թե դամբարանը կառուցվել է 364-ին, որի միակ հիմքն ու ապացույցը, ինչպես տեսանք, Փավստոսի և Խորենացու՝ «ոսկորները թաղեցին Աղձքում» վկայությունն է: Կարծում եմ, մինչև անվիճելի որևէ փաստի երևան գալը, պարտավոր ենք ընդունել*

---

[4] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. նշվ. աշխ., էջ 193:*

[5] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. նշվ. աշխ., էջ 262:*

[6] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր ճարտարապետության պատմության. Աշխատությունների ժողովածու, Երևան, 2013, մաս I, էջ 68, մաս II, էջ 141:*

Թորամանյանի՝ անհարկի մոռացված կարծիքը, այն է՝ Աղձքի դամբարանը և քանդակները հեթանոսական են:

Աղձքի դամբարանը հեթանոսական շրջանի կառույց է, իսկ հուշարձանի հորինվածքն ու քանդակները վկայում են, որ դամբարանը պատկանում է Հայաստան երկրին մեծագույն ծառայություններ մատուցած, մինչ օրս անհայտ նշանավոր ու երևելի անձանց: Այս տեսակետի հիմքում ընկած է նաև դամբարանի հորինվածքում՝ սրահի հյուսիսային ու հարավային խորշերում առանձնացված երկու գերեզմանների առկայության փաստի և Խորենացու տեղեկության համադրումը: Պատմիչը գրում է. «Որովհետև նրանք չկարողացան ջոկել հեթանոսների և հավատացյալների ոսկորները, քանի որ գերողները խառնել էին իրար հետ, ուստի արժան չհամարեցին թաղել սրբերի հանգստարանում՝ Վաղարշապատ քաղաքում»[7]: Առաջադրված տեսակետը վիճարկելու ցանկության դեպքում գիտնականները պետք է ապացուցեն, որ նախքան թաղումը Վասակ զորավարը կամ հայ նախարարները, իրար հետ խառնված ոսկորներից որոշել են թագավորների կրոնական պատկանելությունը, ոսկորները երկու մասի են դասել, դամբարանը նախատեսել ու կառուցել են երկու առանձնացված գերեզմաններով և դրանցից մեկում թաղել են հավատացյալ, իսկ մյուսում՝ հեթանոս թագավորների ոսկորները: Հուշեմ, որ անձի կրոնական պատկանելությունը ոսկորներից որոշելու օրինակների կարելի է հանդիպել միայն առասպելներում: Ուստի դամբարանը Արշակունի թագավորներին վերագրելու համար մնում է միայն մի ելք՝ ընդունել, որ մասունքները թաղվել են գոյություն ունեցող՝ անհայտ անձանց պատկանող դամբարանում: Այստեղ արդեն պարտավոր եմ զգուշացնել, որ այս տարբերակը չափազանց վտանգավոր է, քանի որ ընդունելու դեպքում՝ Աղձքի դամբարանը Արշակունիներին վերագրելու, կառույցը և պատկերաքանդակները 364-ով թվագրելու, դրանք քրիստոնեական ճարտարապետության և քանդակագործության ստույգ թվագրված հուշարձաններ համարելու, ինչպես նաև դրանց հիման վրա վաղ շրջանի հուշարձաններին վերաբերող ու շրջանառվող բոլոր դիտարկումները վայրկենապես կդառնան առ ոչինչ: Ինչը կնշանակի՝ հայ ճարտարապետության ուսումնասիրություններում տեղ գտած տեսակետները վերանայելու ակամա խոստովանություն:

Կարևոր է նշել, որ նախորդ հոդվածում, այստեղ ևս, Փավստոսի և Խորենացու՝ խնդրո առարկա պատմությունները քննության եմ առել իբրև փաստացի տեղեկությունների հիման վրա շարադրված պատմություններ: Հիմա փորձենք հասկանալ դրանց էությունը:

---

[7] *Մովսես Խորենացի. նշվ. աշխ., էջ 262:*

Ստ. Մալխասյանցը Փավստոսի Պատմության մասին գրում է՝ «Փավստոսի Պատմությունը ծայրեծայր լիքն է անհավատալի առասպելներով, չափազանցություններով, հրաշքներով, այնքան շատ են նրանք, որ օրինակներ բերելն ավելորդ է: Որտեղի՞ց են առաջ եկել այս անիրական տեղեկությունները: Դրանք հեղինակը չի ստեղծել իրենից՝ գիտակցաբար ստեր հորինելով, դրանք ժողովրդի ստեղծագործություններն են …», «Այն ոչ թե պատմություն է այս բառի սովորական նշանակությամբ, այլ ժողոված է ժողովրդական ավանդույթների»[8]: Այս կարծիքը լիովին վերաբերում է Փավստոսի Պատմության ԻԴ գլխին՝ վերնագրից մինչև վերջին տողը: Ուստի, այստեղ կարելի էր վերջակետ դնել և արձանագրել, որ Աղձք գյուղում դամբարան կառուցելու կամ գոյություն ունեցող դամբարանում մասունքները վերաթաղելու մասին որևէ բառ, անգամ ակնարկ չկա նույնիսկ առասպելում: Այսուհանդերձ անդրադառնանք այս պատմության կարևոր դրվագներին:

Ովքե՞ր և ո՞ւր էին տանում Արշակունի թագավորների մասունքները:

«… եկան պաշարեցին Անգեղ ամուր բերդը Անգեղ տան գավառում, որովհետև այնտեղ կային Հայոց շատ Արշակունի թագավորների գերեզմաններ և վաղուցվանից ի վեր այնտեղ ամրացված էին շատ գանձեր: Գնացին պաշարեցին բերդը և երբ, տեղի ամրության պատճառով, չկարողացան առնել, թողին ու գնացին: … Նրանց ձեռքն անցավ միայն Անի բերդը Դարանաղի գավառում, որովհետև չարագործ Մերուժանը մի հնարք մեքենայեց այդ ամուր բերդի դեմ: Վեր էին բարձրանում, պարիսպները կործանում էին և բերդից անհամար գանձեր էին դուրս բերում: Բաց էին անում Հայոց նախկին թագավորների, քաջ Արշակունիների գերեզմանները և թագավորների ոսկորները գերի էին տանում: Չկարողացան բանալ միայն Սանատրուկ թագավորի շիրիմը՝ նրա հսկայակառույց հսկայական, պինդ ու ճարտար շինվածքի պատճառով»[9]:

Այն, որ Մերուժանը և պարսից զորքերը պիտի գործեին բացառապես Շապուհի հրամանով, անվիճելի է, ուրեմն ոսկորները գերի տանողը Սասանյան դինաստիայի նշանավոր ներկայացուցիչ, արքայից արքա Շապուհ II-ն է, ում նախնիները III դ. սկզբներին պարտության էին մատնել և ասպարեզից հեռացրել էին Պարթև Արշակունիներին: Շապուհը, ով ծնկի էր բերել տարածաշրջանի միակ ախոյանին՝ Հռոմեական կայսրությանը և կայսր Հովիանոսին ստիպել էր «ամոթալի դաշնագիր» կնքել և, փաստորեն, իրեն հանձնել Հայաստան աշխարհի

---

[8] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. նշվ. աշխ., էջ 29, 52:*

[9] *Նույն տեղում, էջ 191–192:*

բախտը: Եվ այս ամենից հետո արքայից արքան գալիս է Հայաստան և Պարթև Արշակունիների կրտսեր ճյուղերից մեկի՝ Հայ Արշակունիների ոսկորները տանում է Պարսկաստա՞ն: Սա ոչ միայն անհավատալի է, այլև անտրամաբանական: Մասունքները Պարսկաստան տանողը եթե Շապուհը չէ, ապա դժվար չէ կռահել, որ դա Փավստոսի մտահղացումն է:

Մինչ ոսկորները Պարսկաստան տանելու՝ Փավստոսի մտահղացմանն անդրադառնալը, տեսնենք՝ պատմիչը ինչ տեղեկություններ է ունեցել Անգեղ և Անի ամրոցների գերեզմանատների մասին: Թե ովքեր և քանիսն էին Անգեղ ամրոցի գերեզմանատանը հանգչող «շատ» թագավորները, պատմիչը որևէ տեղեկություն չի հայտնում: Եթե ընդունենք, որ գիտեր, սակայն հարկ չի համարել նրանց անունները հիշատակել, քանի որ ամրոցը մնացել է անառիկ, և՝ գերեզմաններն անխաթար, թերևս, հասկանալի կլինի: Սակայն տարօրինակ է, որ Անի ամրոցի գերեզմանները բրելու և Արշակունի թագավորների ոսկորները գերեվարելու այդ աննախադեպ ոճրագործությունը ներկայացնելիս պատմիչը ոչ մի խոսք չի ասում, և, ամենայն հավանականությամբ, չգիտի, թե քանի գերեզման են պղծել և որ թագավորների մասունքներն են գերեվարել, բայց անսպասելի նշում է, որ չկարողացան բանալ միայն Սանատրուկի գերեզմանը: Եթե հաշվի առնենք Փավստոսի Պատմության սկզբում տեղ գտած երկու տեղեկությունն այն մասին, որ Սանատրուկ թագավորը առաքելասպան է, և Խոսրով Կոտակը թաղվել է Անի ամրոցի գերեզմանատանը[10], ապա կստացվի, որ Անիում թաղված թագավորներից պատմիչը գիտի միայն Սանատրուկին և Խոսրով Կոտակին, իսկ Աղձքում վերաթաղված թագավորներից՝ միայն Խոսրով Կոտակին: Ինչ վերաբերում է Անիի անառիկ ամրոցը գրավելուց հետո Սանատրուկի շիրիմը բացել չկարողանալուն, ապա այստեղ ևս ակնհայտ է պատմիչի միտումը. հորինել է շիրիմի առասպելական անառիկությունը, որպեսզի առաքելասպան թագավորի ոսկորները չխառնվեն հեթանոս ու քրիստոնյա թագավորների մասունքներին:

Ո՞րն էր մասունքները Պարսկաստան տանելու նպատակը:

«Որովհետև նրանք, ըստ իրենց հեթանոսական կրոնի՝ ասում էին. «Նրա համար ենք մենք Հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհը տանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու քաջությունը այստեղից թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»[11]: Այստեղ գործ ունենք առասպելներում հաճախ օգտագործվող հնարքի հետ: Տվյալ դեպքում ասելիքը արժանահավատ ներկայացնելու միտումով Փավստոսը հայ թագավորների փառքը, բախտն

[10] *Նույն տեղում, էջ 66, 87:*

[11] *Նույն տեղում, էջ 193:*

ու քաջությունը գովերգող այս միտքը ներկայացրել է իբրև թշնամու՝ տարածաշրջանի հզորագույն պետության զորքերի խոստովանություն: Հայ թագավորների ոսկորները Պարսկաստան՝ մ. թ. ա. VI – IV դդ. աշխարհակալ Աքեմենյանների, պարթև Արշակունիների և Սասանյանների երկիր տանելը Փավստոսի՝ Հայաստանը հզոր ներկայացնելու միտումի դրսևորումն է, որն առնչություն չունի իրականության հետ:

Ո՞րն էր մասունքները Պարսկաստան տանելու ձախողման պատճառը:

«Ապա Վասակ սպարապետը իր վաթսուն հազարով առաջ շարժվեց. իր ետևը թողեց Արշակ թագավորին սպասավորների հետ Մարաց աշխարհում մի ամուր տեղում, իսկ ինքը եկավ հասավ Հայաստանի միջնաշխարհը՝ Այրարատյան գավառը. այնտեղ գտնում է Պարսից զորքերը, որոնք այնտեղ կուտակվել բանակ էին դրել մեծ բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին՝ բանակած Այրարատյան գավառում: Վասակն իր հետ եղած գնդով այնտեղ հասնելով՝ գիշերով անսպասելի կերպով գրոհ է տալիս Պարսից թագավորի բանակի վրա: Եվ տեղնուտեղը սրի են անցկացնում Պարսից բոլոր զորքերը. միայն թագավորը հազիվ ճողոպրում, փախչում է մի ձիով:

... Արդ՝ Վասակը խլում է նրանից Հայաստան աշխարհի բոլոր գերիները, իսկ թագավորների ոսկորները, որ նրանցից Վասակը խլեց, տարան, թաղեցին Աղձք կոչված ամուր գյուղում ... »[12]*:*

Ինչպես տեսանք նախորդ դրվագում Հայաստանի նախկին թագավորների փառքին, բախտին և քաջագործություններին վերաբերող խոսքը հավաստի դարձնելու համար, պատմիչն այն վերագրում է հզոր թշնամուն՝ պարսիկներին: Իսկ այստեղ, Վասակի՝ փոքրաթիվ գնդով հզոր թշնամու հանդեպ տարած հաղթանակը հավաստող նմանատիպ որևէ «փաստարկ», կարծես թե չունի: Սակայն Արշակի և Շապուհի միջև տեղի ունեցած առաջին պատերազմին վերաբերող ԻԱ գլուխը ուշադիր կարդալու դեպքում դժվար չէ նկատել, որ պատմիչը հոգացել է այդ մասին. «Երբ խաղաղություն հաստատվեց Հունաց թագավորների և Պարսից Շապուհ թագավորի միջև, Հունաց թագավորը դաշնագրի թուղթ գրեց ու կնքեց, տվեց Պարսից թագավորին, որի մեջ գրված էր այսպես. «Քեզ եմ տալիս Մծբինը, որ Արվաստանում է գտնվում, և Ասորոց Միջագետքը. Հայաստանի ներքին նահանգներից էլ ձեռք եմ քաշում. եթե կարող ես, նրանց հաղթի՛ր և քո իշխանության տակ նվաճի՛ր, ես նրանց օգնության չեմ գա»»[13]*:*

Եթե մեզ հասած չլիներ 363 թ. հուլիսին կնքած դաշնագրի մասին պատերազմի մասնակից, պատմիչ Ամիանոս Մարկելինոսի վկայութ-

---

[12] *Նույն տեղում, էջ 192–193:*

[13] *Նույն տեղում, էջ 186:*

յունը, ապա Փավստոսի տեղեկությունը բավարար է ըմբռնելու, որ կայսր Հովիանոսի՝ արքայից արքա Շապուհին ուղղված՝ «եթե կարող ես, նրանց հաղթի՛ր և քո իշխանության տակ նվաճի՛ր» խոսքը, որ, փաստորեն, նշանակում է, թե Հայաստանը հռոմեական կայսրությունից ոչ պակաս հզոր է, Հունաց թագավորինը չէ: Փավստոսն այս միտքը հենց սկզբից վերագրում է Հունաց թագավորին, որպեսզի Արշակի և Շապուհի միջև տեղի ունեցած 23 կռիվներում պարսկական միլիոնավոր զորքերը սրի քաշելու և առանց բացառության բոլոր պատերազմներում հայերի տարած փառահեղ հաղթանակները, Շապուհի մի ձիով ճողոպրելը ներկայացնի իբրև արժանահավատ իրողություն:

Ինչ վերաբերում է թագավորների ոսկորները Աղձք գյուղում վերաթաղելու վկայության «հավաստիությանը», ապա բավարար է նշել այն փաստը, որ պատմիչը չի հիշատակում և, ամենայն հավանականությամբ, անտեղյակ է Աղձքում հիշարժան դամբարանի գոյության մասին:

Փավստոս Բուզանդի ձեռքի տակ հավաստի տեղեկություններ չեն եղել: Եվ անկախ այն բանից, թե պատմիչն ինչ չափով է օգտվել ավանդազրույցներից, խնդրո առարկա պատմությունը իրական անձերի և տեղանունների վրա՝ մեծ վարպետությամբ հյուսված գեղեցիկ առասպել է, չարի և բարու հակամարտության տիպական օրինակ, որտեղ, իբրև կանոն, ի վերջո, հաղթում է բարին: Եվ ինչքան էլ ջանանք ինչ-որ պատճառաբանություններ փնտրել կամ հորինել՝ ոսկորների գերեվարումը կապել հեթանոսական կրոնի հետ, իսկ Վասակի հաղթանակը անսպասելի գրոհի արդյունք, միևնույն է, առասպելն իրողություն չի դառնա: Պատմիչը քաջատեղյակ է իր երկրի բազմաթիվ տարածքների կորստյան և Հայոց թագավորության վերացման պատճառներին, սակայն այդ մասին նա լռում է. ո՛չ անցյալում գործած սխալներին և մեղքերին է անդրադառնում, ո՛չ էլ երկպառակությունն ու դավաճանությունն է դատապարտում, այլ ամեն կերպ ջանում է անցյալը և կոնկրետ Արշակ թագավորին, Վասակ զորավարին և հայկական զորքը ներկայացնել հնարավորինս արժանավայել: Քանզի Փավստոսի միակ և հիմնական նպատակը ապագա սերունդների մեջ հայրենասիրություն, սեփական ուժերի նկատմամբ վստահություն և հզոր թշնամուն հաղթելու հավատ ու կամք սերմանելն է:

Ստ. Մալխասյանցը Խորենացու Պատմության մասին գրում է. «Բայց առանձին պայմանի մեջ է այստեղ Փավստոսի Պատմությունը, որից օգտվել է Խորենացին, բայց թաքցնում է այս աղբյուրը …»[14]: Նկատի առնելով, որ Աղձքի դամբարանին անդրադառնալիս հիմնականում վկայակոչվում է Խորենացու պատմության՝ «Ինչպես Արշակավանը

[14] *Մովսես Խորենացի. նշվ. աշխ., էջ 18:*

շինվեց ու կործանվեց և Անին գրավվեց» վերնագիրը կրող ԻԷ գլուխը, այն մեջբերում եմ գրեթե ամբողջությամբ.

«Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմիտ գործ գործեց: Մասիս լեռան թիկունքում նա շինեց մի դաստակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի. և հրաման արձակեց, թե ով կարողանա այնտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա դատական օրենքը չի գործի: Անմիջապես ամբողջ հովիտը ծովացած լցվեց մարդկանց բազմությամբ…: Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակը նրանց չլսեց, այն աստիճան, որ նրանք մինչև Շապուհին դիմեցին: Եվ երբ Շապուհը Հունաստանից ետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ գնդով ուղարկեց, որ երբ հարմար լինի, Արշակին բռնի, բայց նա խուսափեց նրանից, փախավ Կովկասի կողմերը, վրացիների հետ միանալով: Իսկ Պարսից սպարապետը Հայաստան գալով նախարարների օժանդակությամբ առնում է Անի ամրոցը, ավարում են այնտեղ պահված բոլոր արքունական գանձերը, այլև թագավորների ոսկորները, չգիտեմ՝ Արշակին նախատինք հասցնելու նպատակո՞վ, թե որևէ հեթանոսական հմայքի համար: Բայց հետո նախարարները խնդրեցին ետ ստացան (ոսկորները) և թաղեցին Աղցք ավանում, որ Արագած կոչված լեռան ստորոտում է: Որովհետև նրանք չկարողացան ջոկել հեթանոսների և հավատացյալների ոսկորները, քանի որ գերողները խառնել էին իրար հետ, ուստի արժան չհամարեցին թաղել սրբերի հանգստարանում՝ Վաղարշապատ քաղաքում: Իսկ Հայոց նախարարները հավաքվելով դիմեցին թագավորական դաստակերտ Արշակավանի վրա, սրով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից … Այս բանը թեպետ իմացավ մեծ Ներսեսը, բայց չկարողացավ կոտորածից առաջ հասնել, այլ հասավ վերջում, երբ կոտորվածների երեխաներին բաժանելով ուզում էին գերի տանել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաների: Մեծ Ներսեսը նրանց ազատեց … »[15]*:*

Դժվար չէ նկատել, որ Խորենացին, Փավստոսի Պատմության ԺԳ և ԻԴ գլուխներում տեղ գտած պատմությունները միահյուսելով, հորինել է մի նոր պատմություն: Ընդ որում՝ Արշակ թագավորի հրամանի և Արշակավան քաղաքի հիմնադրման պատմությունները Խորենացին նույնությամբ վերցրել է Փավստոսից, իսկ Արշակավանի կործանման ու թագավորների մասունքների առևանգման պատմությունները փոխել է անճանաչելիորեն: Այսպես, ըստ Փավստոսի՝ Արշակի հրամանից դժգոհ են և՛ Խադ եպիսկոպոսը, և՛ Ներսես կաթողիկոսը, և՛ անխտիր բոլորը. «… բոլորի բերանում ընդհանուր խոսք էր դարձել և միշտ ասում էին, թե «Իրավունքը մեռավ. եթե նա գոյություն ունենար, բայց կո-

[15] *Նույն տեղում, էջ 262–263:*

րած լիներ, կփնտրեինք, մի տեղ կգտնեինք նրան»[16]: Փավստոսի տեքստում Ներսես կաթողիկոսը խիստ նախատում է Արշակին. «Դու քո տեր աստծու առաջ սկսեցիր անօրինություններ գործել, ամբարշտություն, անիրավություններ բոլորովին սոդոմացիների նման, և այս բաները դու հայտնապես պարծենալով պատմում ես … : Արդ՝ լսի՛ր, ինչ-որ քեզ ասում եմ, և կատարի՛ր, որպեսզի կարողանաս քեզ փրկել աստծու բարկությունից, և թշվառ Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի. որովհետև ես երազ տեսա, որ Հայոց կորստական աշխարհի համար կորուստ և կործանում է պատրաստվում գալ: … Երանելի Ներսեսի բերանից ելած այս խոսքերից հետո հազիվ էր անցել երեք օր, որ աստված Արշակական գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց: Մարդկանց և անասունների վրա սկսեցին դուրս գալ չարորակ պալարներ, որ ոմանք կոչում են ժանտ: Այս հարվածը երեք օրից ավելի չտևեց, որ (քաղաքը) անմարդացավ, մոտ քսան հազար ընտանիք կոտորվեց…»[17]:

Խորենացու պատմության մեջ դժգոհ են միայն նախարարները, և պատմիչը նրանց է վերագրում Արշակավանի կործանումը: Ակներև է, որ հայ նախարարների կողմից, ի դեպ առանց Շապուհի ուղարկած գնդի, Արշակավանի բոլոր տղամարդկանց և կանանց սրի քաշելու՝ այդ աննախադեպ ոճրի նույնիսկ մտադրությունը նույնքան անհավանական է, որքան՝ Փավստոսի պատմության մեջ Ներսես կաթողիկոսի մարգարեության դրվագը: Ինչ վերաբերում է Անիի գրավման, Արշակունի թագավորների ոսկորների առնանգման ու Աղձքում վերաթաղելու դրվագներին, Խորենացին այստեղ ևս Փավստոսի առասպելը փոխարինել է մեկ այլ առասպելով: Շապուհն իր սպարապետներից մեկին ուղարկում է, «որ երբ հարմար լինի, Արշակին բռնի», սակայն սպարապետը զանց առնելով արքայից արքայի հրամանը, ինքնագլուխ՝ սեփական գլուխը կորցնելու իրական վտանգը աչքի առաջ ունենալով, դիմում է աննախադեպ ոճրի՝ հայ թագավորների գերեզմանները բրում է, ոսկորները հանում, որպեսզի տանի Պարսկաստան: Այս հանցանքը արդարացնելու համար կարելի էր ինչ-որ բան մոգոնել, եթե դրան չհաջորդեր մի նոր հանցանք՝ սպարապետը հայ նախարարների խնդրանքով ետ է վերադարձնում ոսկորները: Անհավանական է նաև նախարարների պահվածքը՝ ի սկզբանե տեղյակ լինելով սպարապետի մտադրությանը, նրանք օգնում են գրավելու ամրոցը և, մասնակից կամ ականատես լինելով գերեզմանները բրելու, ոսկորները հատ-հատ հանելու, մի տեղում ժողովելու այդ երկարատև գործողությանը, միայն վերջում՝ Պարսկաստան տանելու պահին խնդրում և ետ են ստանում ոսկորները:

---

[16] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. նշվ. աշխ., էջ 159–160:*

[17] *Նույն տեղում, էջ 163–164:*

Անհասկանալի է նաև այն հարցը, թե նախարարները մասունքները ինչու չեն վերաթաղում նույն տեղում՝ Անի ամրոցի կամ մոտակա Անգեղ ամրոցի գերեզմանատանը, այլ շուրջ 500 կմ ճանապարհ կտրելով տանում են Աղձք: Ի վերջո, բավարար է նշել միայն այն փաստը, որ Խորենացին երկմտում ու չի կարողանում բացատրել ոսկորները Պարսկաստան տանելու նպատակը. «…չգիտեմ՝ Արշակին նախատինք հասցնելու նպատակո՞վ, թե որևէ հեթանոսական հմայքի համար»:

Արդ, ամփոփենք Խորենացու Պատմության Ի Է գլխում շարադրված դրվագները. Արշակ թագավորը վախկոտ է ու դավաճան, նա լքում է իր և իր նախնիների երկիրն ու փախչում է Կովկասի կողմերը. հայ նախարարները դավաճանաբար դիմում են թշնամուն և հրավիրում Հայաստան, նրանք ոչ միայն օգնում են թշնամուն Անի ամրոցը գրավելու և արքունական գանձերը կողոպտելու, այլև թագավորների մասունքները առևանգելու. հայ նախարարները Արշակավանի բոլոր տղամարդկանց ու կանանց սրի են անցկացնում, իսկ ծծկեր երեխաներին, ինչպես հեռավոր թշնամիների երեխաների, ուզում են գերի տանել. դավաճանների և հայրենիքը լքողների թիվն այն աստիճանի էր հասել, որ Պարսկաստանում ստեղծվել էր հայ դավաճաններից կազմված, Հայաստանի դեմ պայքարող հայ գունդ: Այս ամբողջ պատմության մեջ միայն մեկ դրական կերպար կա՝ Ներսես կաթողիկոսը:

Ակներև է, որ այս ամենը Խորենացու հետապնդած հիմնական խնդրի և մեկնակետի տրամաբանական հորինվածքն է, որն ավարտի է բերվում հանրահայտ «Ողբ»-ի մեջ:

Այս համատեքստում Աղձքին վերաբերող «տեղեկությունը» համարել հավաստի վկայություն, նշանակում է անտեսել կամ չըմբռնել պատմիչի բուն խնդիրը:

Փավստոսի և Խորենացու պատմություններում անհավանական դրվագների առկայության պատճառները հասկանալու համար բերենք Հակոբ Մանանդյանի մի ուշագրավ դիտարկումը. «…Փավստոսի և Խորենացու վկայությունները Արշակ թագավորի հրամանի մասին խիստ գունավորված են ու չափազանցված»[18]: Հայտնի է, որ պատճառն է պայմանավորում և առաջ բերում հետևանքը կամ գործողությունը: Ուրեմն, եթե հրամանի մասին պատմիչների վկայությունները խիստ գունավորված ու չափազանցված են, այսինքն՝ անիրական են, բնականաբար, նույնքան, եթե ոչ ավելի անիրական է նաև հետևանքը՝ թագավորների ոսկորները առևանգելու, Աղձքում վերաթաղելու, Արշակավանի բնակիչներին կոտորելու … պատմությունները: Իսկ այն հանգամանքը, որ Արշակի հրամանի մասին փաստացի որևէ տեղեկություն գոյություն չունի, և Արշակն էլ ցնորված չէր, որ նման հրաման արձակեր, ավելորդ

[18] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 166:*

անգամ հաստատում և բերում է այն համոզման, որ Փավստոսի և Խորենացու պատմություններում առկա տեղեկությունները անիրական են:

Ավանդագրույցներին ու առասպելներին դիմելու, դրանք ինչ որ չափով փոփոխելու կամ նորերը հորինելու՝ պատմիչների, ինչպես նաև վիպասանների միտումը, բացառապես բարոյախոսություն է: Այս առումով Փավստոսի և Խորենացու պատմություններն էլ բացառություն չեն, և նպատակն էլ ավելի քան հասկանալի է: Սակայն անհասկանալի և անթույլատրելի է, երբ XXI դ. ուսումնասիրություններում առասպելն է հիմք ընդունվում գիտական խնդիրներ լուծելու, տվյալ դեպքում, հայ ճարտարապետության պատմության հանգուցային հուշարձանի՝ Աղձքի դամբարանի թվագրության և պատկանելության հարցը վճռելու համար:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ առաքելական եկեղեցու սբ. Մեսրոպ Մաշտոց դպրատան նախաձեռնությամբ հրավիրված՝ Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցները՝ գիտնականներ, հոգևորականներ, Հայոց բանակի զինվորներ, միջազգային գիտաժողովը լուսաբանող թղթակիցներ այցելում են Աղձքի դամբարան և հոգևոր ու զինվորական արարողություններով հիշատակի տուրք են մատուցում Հայ Արշակունի թագավորներին[19]: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուի մեջ տեղ գտած այս տեղեկություններն ընթերցելիս և լուսանկարները դիտելիս ակամա մտաբերում ես Աղձքի դամբարանի մասին Հովհաննես Շահխաթունյանցի հետևյալ վկայությունը. «… և, ի կարևոր մաքրութեան պահէին նոքին այլազգի բնակիչքն. յորոյ ի հարցանել մեր զտեղւոյս, պատասխանէին. պիզիմ փիրիմիզ տիր, զիարէթ երի («պատուեն զտեղին որպէս զսրբոյ իւրեանց առաջնորդի»)[20] և երբեմն լոյս ևս վառեն անդ՝ բայց չգիտեն զինչ լինելն»[21]: Դժվար չէ նկատել, որ XIX դ. 40-ականներին Աղձք գյուղի ընդամենը 9 տուն այլազգի մահմեդական գյուղացիների և XXI դ. սկզբներին միջազգային գիտաժողովի կազմակերպիչների և մասնակիցների վարքագիծը, ըստ էության, նույնն է՝ դամբարանում հիշատակի ծես են կատարում «բայց չգիտեն զինչ լինելը»: Բայց սա դեռևս ամենը չէ: Միջազգային գիտաժողովի զեկուցումներից մեկում արձանագրվեց նաև չլսված ու չտեսնված մի գյուտ՝ Փավստոսի ու Խորենացու տեղեկությունների հիման վրա հետևեցվեց, որ

---

[19] *Տիգրան Մեծ. Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (2005 թ.), Երևան, 2011:*

[20] *Ղ. Ալիշան. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 148:*

[21] *Հ. Շահխաթունյանց. Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 67:*

Աղձքի դամբարանում վերաթաղվել են նաև Տիգրան Մեծի ոսկորները: Մատենագրական տեղեկություններում, անգամ առասպելներում երբևէ չհիշատակված, Հայաստանի ծովից ծով տարածքի անհայտ վայրում հանգչող Տիգրան Մեծի աճյունը նախ՝ Անի ամրոց տեղափոխելու և գերեզմանոցում վերաթաղելու, այնտեղից ոսկորները Աղձք գյուղ տեղափոխելու և անհայտ ննջեցյալների դամբարանում վերա-վերաթաղելու այս արկածախնդրությունը քննության առնել, կնշանակի հավասարության նշան դնել գիտության և անգիտության միջև:

Աղձքի դամբարանը Արշակունի թագավորներին վերագրելու այս մտացածին վարկածը հեղինակավոր կազմակերպությունների կողմից կամա թե ակամա հաստատելը և մասսայականացնելը հանգեցրեց նրան, որ անհայտ ննջեցյալների դամբարանը այսօր արժեվորվում և ներկայացվում է իբրև Հայոց արքաների միակ հավաստի դամբարան և, ինչպես ասում են, պինդ բռնվեք, Հայաստանում պետական և թագավորական իշխանության հնագույն վկայություն: Առաջարկվել է նաև Աղձքում պետական հովանավորությամբ պեղումներ, բարեկարգումներ և վերականգնումներ կատարելուց հետո պետական նշանակության հանդիսություններ, բարձրագույն սպայական կազմի երդման արարողություններ և այլ միջոցառումներ անցկացնել: Բայց քանի որ «հայրենասիրությունը» սահման չունի, իսկ հայրենասերներն այնքան համբերություն չունեն, որ սպասեն մինչև դամբարանի վերականգնումը, ուստի շատ արագ որոշեցին, որ նոյեմբերի 28-ը կարելի է ամենամյա ժողովրդական տոն հայտարարել: Եվ ուխտագնացություն կազմակերպեցին Աղձքի դամբարան, բոցաշունչ ելույթներով, երգերով ու պարերով նշեցին «Արքայաց տոնը», «Արքայաց օրը» և «Ուժի օրը»:

Հայ Արշակունի թագավորները, անշուշտ, արժանի են հարգանքի տուրքի՝ այդ արարողակարգին պատշաճող բոլոր ծեսերով, սակայն այնտեղ, ուր հանգչում են նրանց շիրիմները, այն է՝ Անգեղ տան և Դարանաղի գավառների Անգեղ և Անի ամրոցների գերեզմանատներում:

Իսկ Աղձքի դամբարանում ո՞վքեր և ե՞րբ են թաղվել հարցերի պատասխանները, որ, անկասկած, պարզություն կմտցնեն նաև դամբարանի կառուցման ժամանակը և պատկանելությունը որոշելու հարցում, ավելի քան մեկուկես դար, մնում են առկախ:

Մինչդեռ առաջին և պարտադիր քայլը պիտի լիներ ու պիտի լինի դամբարանում առկա երկու գերեզմանների պեղումները: Այս պարագայում, մնում է միայն փաստել, որ Աղձքի դամբարանի պատկանելության և թվագրության հարցերը դեռ երկար ժամանակ թաղված կմնան դամբարանում անհայտ ննջեցյալների հետ:

Աղձքի դամբարանի թվագրության և պատկանելության անհիմն վարկածի որդեգրումը, բնականաբար, բերեց նրան, որ սխալ մեկնաբանվեցին և թվագրվեցին նաև պատկերաքանդակները: Իսկ արտա-

ռոցն այն է, որ նույն կերպ մեկնաբանվեց նաև դամբարանի ծավալատարածական հորինվածքը: Բանն այն է, որ գիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ գրեթե բոլոր փաստերը դեռևս թաղված են համալիրի սկզբնական շինությունների, դարերի ընթացքում կատարված հավելումների ու վերակառուցումների ավերակների տակ: Եվ պատկերացում չունենալով դամբարանի հիմքերի, արտաքին պատերի կառուցվածքի, շարվածքի ձևի, քարերի տեսակի և, ամենակարևորը, հատակագծի արտաքին ձևի մասին, չունենալով հարավային կողմում հայտնաբերված աստիճանների մնացորդները սկզբնական հորինվածքին պատկանելու, դրանք արևելյան կողմում շարունակված լինելու և ստիլոբատ համարելու որևէ ապացույց՝ այսօր շրջանառության մեջ է դրված վերակազմության երկու նախագիծ:

Դեռևս 1979-ին առաջ քաշվեց մի վարկած, թե դամբարանն ի սկզբանե երկհարկանի է եղել՝ առաջին հարկը նախատեսվել է որպես դամբարան, իսկ երկրորդը՝ աղոթարան. «Հուշարձանի ծավալատարածական լուծումը, ինչպես պարզվեց, հիշեցնում է Կյուրոսի հանրահայտ դամբարանը»[22]: Եթե ուշադրություն դարձնենք, թե ինչ առիթով է արվել այս հայտնագործությունը, կարծում եմ, ամեն ինչ պարզ կդառնա: 2011-ին Կյուրոսի դամբարանը Աղձքի դամբարանի նախատիպ համարվող վարկածը ոչ միայն հաստատվեց, այլև տրվեց դրա՝ հայրենասիրական թեքումով գիտա-գեղարվեստական հիմնավորումը. «Հայոց արքաների գերեվարված և ազատագրված մասունքների կամառը բնականաբար կարող էր կրկնել Աքեմենյան հարստության ամենանշանավոր արքայի՝ Կյուրոսի դամբարանի ձևը՝ դրանով իսկ շեշտելով հայոց թագավորների հնագույն տոհմից սերված լինելը»[23]: Աղձքի և Կյուրոսի դամբարանների ծավալատարածական հորինվածքներին անծանոթ գիտնականների և լայն շրջանի ընթերցողների համար պարզաբանեմ, որ Աղձքի երկհարկանի դամբարանի և Կյուրոսի միհարկանի դամբարանի, ինչպես նաև աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող Մավսոլոս արքայի երկհարկանի և Լենինի միհարկանի դամբարանների «ծավալատարածական հորինվածքների» միակ ընդհանրությունը դրանց անվանումն է՝ դամբարան:

Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու վկայությունների թյուր ու երևակայական մեկնաբանությունների վրա հիմնված հայ և համընդհանուր մշակույթի պատմության բացառիկ արժեքավոր հուշարձանի՝ Աղձքի դամբարանի ի սկզբանե ընդունված և այսօր էլ շրջանառվող վարկածը, ըստ որի՝ դամբարանը կառուցվել է 364-ին և պատկանում է Արշակունի թագավորներին, անգամ իբրև վարկած, միանշանակ անընդունելի է: Վարկած, որն առանց վարանելու կարող ենք համարել հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության անժամանակ վախճանի պերճախոս խորհրդանշան:

---

[22] Композиционные параллели в мемориальных памятниках Ирана и Армении. Искусство и археология Ирана и его связь с искусством народов СССР с древнейших времен, III Всесоюзная конференция, тезисы докладов. М., 1979, с. 59–60.

[23] *Աղձքի արքայական դամբարանի հուշարձանախումբը. <Հուշարձան> տարեգիրք, հ. Է, Երևան, 2011, էջ 21:*

Այս ամենը վերաբերում էր գիտությանը, սակայն այստեղ առկա է մեկ այլ չափազանց կարևոր խնդիր: Բուզանդի և Խորենացու վկայությունների թյուր և մտացածին մեկնաբանությունը շրջանառության մեջ դնելով ու ջանադրաբար մասսայականացնելով՝ գիտնականներն առանց հետևանքն ըմբռնելու՝ կամա թե ակամա, մեր նախնիների բարի համբավը, վարքն ու բարքերը հայ հասարակությանը, ինչպես նաև օտարներին ներկայացնում են նենգափոխված, ինչը, մեղմ ասած, անմտություն է:

ПРОБЛЕМА ДАТИРОВКИ И ПРИНАДЛЕЖНОСТИ МАВЗОЛЕЯ В АХЦКЕ

ВААГН ГРИГОРЯН

Р е з ю м е

Мавзолей в Ахцке является строением языческого периода и не имеет какой-либо связи с погребением мощей царей Аршакидов. Изначально принятая и находящаяся по сей день в научном обращении точка зрения, согласно которой мавзолей был построен в 364 г. и принадлежал царям Аршакидам – неприемлема, так как является результатом ошибочного прочтения и надуманной интерпретации свидетельств Павстоса Бузанда и Мовсеса Хоренаци.

THE PROBLEM OF DATING AND BELONGING OF THE MAUSOLEUM IN AGHTSK

VAHAGN GRIGORYAN

S u m m a r y

The mausoleum in Aghtsk is a pagan structure and does not have any connection with the buried relics of the Arsacid kings. The initially accepted and presently circulating viewpoint, according to which the mausoleum was built in 364 and belonged to the Arsacid kings is not acceptable, as it is the result of wrong perception and forced interpretation of evidences by Pavstos Buzand and Movses Khorenatsi.